**198.** ***ԿԻՍԱՎԵՐ ՄԱՏՈՒՌԻ** արևմտյան մուտքի կամարակալ քարի վրա.*

Վարհամ Խաթուն յաղաւթս յիշեցէք.

*Հրատ. Ջալալեանց, 134, Ալիշան, 118,*

**199.** ***ԿԻՍԱՎԵՐ ՄԱՏՈՒՌԻ** ներսում. մի խաչքարի պատվանդանի վրա.*

Ի թվին մերոյ :ՉԿԹ: (=1320) Յակոբ Էրէց կանգնեցի զխաչս իմն և ամուսնոյն իմոյ, որք կարդայք յաղաւթս յիշեցէք:

*Հրատ. Ջալալեանց, 134, Ալիշան, 118,*

**200.** ***ԿԻՍԱՎԵՐ ՄԱՏՈՒՌԻ** մուտքի հյուսիսում.*

. . . Ն. ամենավեհ իշխանի Պռոշոյ եկեղեցիս և մանկան Էաչոյ և մեծահաւատ շիկնոջ խոսանայ, յորժամ տէր էր տեղւոյս:

Ծանոթ. *Խոսան անունը սխալ է վերծանված. Պռոշի կնոջ անունը* Խութլու խաթուն *էր,*

*Հրատ. Ջալալեանց, 134, Ալիշան, 119, Հովսեփյան, Խաղբակյանք, Ա, 43,*

**201.** ***ԿԻՍԱՎԵՐ ՄԱՏՈՒՌԻ** մուտքի վրա, նախորդից ներքև.*

Կանգնեցաւ խաչս ի փրկութիւն Ջնաբուղայ ոգին. թվին :ՉԽԶ: (1297):

*Հրատ. Ջալալեանց, 134, Ալիշան, Սիսական, 119,*

**202.** ***ՏԱՊԱՆԱՔԱՐԻ ՎՐԱ,** որը գտնվելիս է եղել եկեղեցու արևմտյան մուտքի առաջ, որոշ է միայն թվականը՝*

:ՉԾԳ: (1304):

*Հրատ. Եղիազարյան, 40,*

## 16. ԹԱՆԱՏԻ ՎԱՆՔ

*Այս վանքը գտնվում է Վերնաշեն գյուղից դեպի հարավ-արևելք, 6—7 կիլոմետր հեռու՝ Մալիշկա տանող ճանապարհի վրա, Տեղացիները սովորաբար Ղարավանք են անվանում թե՛ վանքը և թե՛ գյուղատեղը,*

*Վանքի Թանահատ կամ Թանատ անունը, ինչպես և գլխավոր եկեղեցին ս. Ստեփանոսի անվամբ կոչելը՝ շփոթ են առաջացրել մասնագիտական գրականության մեջ, Խնդիրն այն է, որ գոյություն են ունեցել երկու Թանահատի վանքեր և երկուսի էլ եկեղեցիները կոչվել են ս. Ստեփանոս, Այս տեղեկությունների հիմնական աղբյուրը Ստ. Օրբելյանի պատմությունն է, ուր հնագույնը տեղադրված է բուն Սյունիքում, Ծղուկ գավառում և «400 ամաւ յառաջ շինեցաւ եկեղեցին քան զհայ թուականն»[1], իսկ մյուսը՝ Վայոց ձոր գավառում՝ կապված VIII դարի նշանավոր մատվորական Ստեփանոս եպիսկոպոսի սպանության և այստեղ թաղվելու դեպքերի հետ[2], Քանի որ մինչև վերջին տասնամյակները Թանահատի այդ երկու վանքերից միայն մեկի՝ Վայոց ձորում գտնվածի տեղն էր ստույգ հայտնի, այդ պատճառով էլ պատմագրի՝ երկու տարբեր հուշարձանների մասին հաղորդածները միացվում էր բանասերների կողմից և վերագրվում Վայոց ձորի Թանահատին[3],*

[1] Ստ. Օրբելեան, *Պատմութիւն, էջ 160,*

[2] *Անդ, էջ 143:*

[3] Ջալալեանց, *Բ, 206,* Քաջբերունի, *Արարատ, 1889, Բ, 100:* Ալիշան, *Սիսական, 110,*

Ծղուկ գավառում (այժմյան Սիսիանի) կատարած մեր պրպտումները պսակվեցին հաջողությամբ, գտնվեց պատմագրի նշած հնագույն Թանահատի վանքը, հին ու անաղարտ բազիլիկ մի շենք, որի և՛ տեղագրությունը և՛ արձանագրություններն ու այլ մանրամասնություններն ամբողջովին համընկնում են Ստ. Օրբելյանի նկարագրությունների հետ։ Այսպիսով վերացավ Թանահատի երկու վանքերը միացնելու անտեղի շփոթը[1]։

Այս հուշարձանի հետ կապված երկրորդ տարաձայնությունը առաջացել էր վերջերս։ Երկու բանասերներ այս վանքը նույնացրել են Գլաձորի հայտնի վանք-դպրոցի հետ։ Այս կարծիքն առաջին անգամ, առանց որևէ հիմնավորման, հայտնել է (Ն. Լալայանը[2]), իսկ ավելի ուշ՝ Ս. Ավետիսյանը, որի փաստարկները, սակայն, ենթադրություններ և կռահումներ են միայն[3]։

Իրականությունը հետևյալն է.

1. Գլաձորի վանքն ունեցել է նաև մի երկրորդ անուն. դա Աղբերց վանքն է։

2. Գլաձորում գրված բազմաթիվ ձեռագրերի հիշատակարանների մեջ այդ վանքը հիշվում է միայն այս երկու անուններով (առավելապես Գլիձոր կամ Գայլիձոր)։

3. Թանահատի վանքի պատերի արձանագրությունների և ձեռագրական հիշատակարանների մեջ այս վանքը միայն իր Թանահատ կամ Թանատ անունով է հիշատակված։

4. Թանահատի վանքի և գերեզմանատան բազմաթիվ արձանագրությունների և տապանագրերի մեջ չի երևում Գլաձորի դպրոցի նշանավոր գործիչներից որևէ մեկի անունը։

5. Առնվազն VIII դարից գոյություն ունեցող այս վանքը միշտ նույն՝ Թանահատ անունն է կրել (տեղացիների կողմից գործածվող Ղարավանք անունը նոր է և վանքին կից, մինչև վերջին տասնամյակները գոյություն ունեցող թուրք գյուղացիների հորինածն է)։

Այս բոլորից հետո պարզ է միանգամայն, որ Գլաձորի վանքը հայտնաբերելու համար պետք է ստուգման ենթարկվեն թե՛ Գ. Հովսեփյանի մատնանշած վայրը[4] և թե՛ Վայոց ձորի այդ մասի այլ վայրերը։

Վայոց ձորի Թանահատի այս վանքն ունի ավելի հին անցյալ, քան ներկայումս պահպանված կիսավեր շենքերը։ Համաձայն Ստ. Օրբելյանի հաղորդած տեղեկությունների, դեռևս VIII դարում նույն տեղում գոյություն է ունեցել Թանահատ անունով վանք[5]։ 735 թ. վանքին մոտիկ Մող ավանում սպանվում է իր ժամանակի նշանավոր մտավորական Ստեփանոս Սյունյաց եպիսկոպոսը, որին թաղում են Թանահատի այս վանքում։ Միայն 1279 թ. կառուցվում է ներկայումս գոյություն ունեցող եկեղեցին, որի հիմքում և դրվում է Ստեփանոսի տապանը։

Օրբելյանի նշանակած 1279 թ, վեց տարով տարբերվում է շինարարական այն արձանագրությունից, որը մենք դրել ենք այս վանքի արձանագրությունների սկզբում։ Այս տարբերությունը ոչ միայն հեշտությամբ բացատրվում է, այլև նպաստում է մեր երկրորդ շինարարական, այժմ կորած, արձանագրության թվականը ճշտելուն։

Առաջին արձանագրությունը բաղկացած է չորս տառից և միայն թվականն է նշում։ Այդ արձանագրությունն իր տեղի բարձրության և սեղմ բովանդակության պատճառով կարող էր աննկատ մնալ կամ չհասկացվել պատմագրի կողմից. իսկ երկրորդ արձանագրությունը և՛ մատչելի տեղում է և՛ ունի ճոխ բովանդակություն, որից հեշտությամբ կարող էր օգտվել պատմագիրը։ Հենց այս հանգամանքը օգնում է վերականգնելու այժմ կորած նրա թվականը —ՉԻԸ=728+551= 1279, որն Օրբելյանի ժամանակ անշուշտ ամբողջ է եղել։ Այն, որ շինարարական երկու արձանագրություն կա և տարբեր թվերով, նույնպես հասկանալի է. դրանցից առաջինը, լոկ թվական պարունակողը՝ գրվել է շինարարության ընթացքում, մի քարի վրա և տեղավորվել շենքի բարձր գմբեթին. մյուսը, ընդարձակը, գրվել է շենքն ավարտելուց հետո, եկեղեցին օծելու ժամանակ, որին ներկա են եղել շինությանը հովանավորող Պռոշն ու իր զավակները։ Նրանք իրենց համար պատարագներ են որոշել և հիշատակարան գրել ավել։

---

[1] Ս. Բարխուդարյան, Հինգերորդ դարի երկու հուշարձան Սյունիքում, «Տեղեկագիր» պատմ. և գրակ. ինստիտուտի, № 1, Երևան, 1936։

[2] «Ազգագրական հանդես», XII, էջ 271։

[3] «Գլաձորի համալսարանը», «Էջմիածին», IV—V, 1956։

[4] «Խաղբակյանք», Ա, 39, Բ, 189։

[5] Ստ. Օրբելեան, Պատմութիւն, 143։

Թանահատի վանքում պահպանվել են հետևյալ կանգուն և կիսավեր շենքերը.

1. Ս. Ստեփանոս, *գմբեթավոր եկեղեցի, արտաքուստ՝ քառանկյուն, ներքուստ՝ խաչաձև, որը գոյացել է չորս անկյուններում կրկնահարկ ավանդատներ շինելու հետևանքով: Շինված է մաղ գույնի սրբատաշ քարերով՝ մեծ վարպետությամբ և խնամքով, կանգուն է, թափվել են արտաքուստ պատերի վերին մասերը. արևմտյան և հարավային պատերի վրա կան գեղեցիկ բարձրաքանդակներ: Շինված է Պռոշյանների հովանավորությամբ՝ 1273—1279 թվականներին: Արձանագրությունների մեծ մասն այս հուշարձանի պատերին է՝ ներքուստ և արտաքուստ:*

2. Ս. Նշան, *եկեղեցի, նախորդին կից է հյուսիսից, ծածկը բոլորովին փլած է. պատերը կիսով չափ կանգուն (բացի արևելյանից): Շինարարական արձանագրություն չունի, բայց տեխնիկական հատկանիշներով նման է Ս. Ստեփանոսին, հետևաբար ժամանակակից է նրան: Խիստ արժեքավոր է արևմտյան մուտքի ճակատակալ քարի վրա քանդակված որսի տեսարանը, հեծյալ որսորդը նիզակը մխել է գազանի բերանը: Քարի վերին շրթունքին եղած արձանագրությունն իսպառ ջարդված է (մնում են 2-3 տառեր):*

3. Ավերակ շենք, *գտնվում է եկեղեցիներից հարավ-արևելք, բակի մեջ, քառակուսի հատակագծով. մնացել են միայն հիմնապատերը:*

4. Գերեզմանատուն, *գտնվում է վանքից մոտ 150 մետր հարավ, փոքր բլրի գագաթին: Այստեղ կան խաչքարեր և տապանաքարեր, որոնց արձանագրություններն ավելի հին են, քան վանքի շինությունը:*

5. Խաչքարեր, *ցրված են վանքի շրջապատում և ճանապարհների եզրերին:*

*Ժողովածուն այս հուշարձանից պարունակում է 66 արձանագրություն, որից 20-ը հրատարակվում են առաջին անգամ:*

**203. Ս. ՍՏԵՓԱՆՈՍԻ** *գմբեթի թմբուկի հարավային պատուհանի գլխին, արտաքուստ, չորս անջատ տառերով, շինության թվականը.*



Թ[ՎԻՆ] :ՋԻԲ: (=1273)

Ծանոթ. *Գրված է մի մեծ երեսպատման քարի վրա, որի ստորին եզրը կազմում է նեղ պատուհանի ձևավորված պսակը: Կենտրոնում մի թևատարած արծվի բարձրաքանդակ է, որը մագիլներով բռնել է խոյին. քարի չորս անկյուններում կան միկական տառեր:*

*Շինության թվականի նման տեղերում և գլությյան նման հակիրճ ձևը հատուկ են* XIII—XIV *դարերին:*

*Հրատ. Քաջբերունի, Արարատ, 1889, Բ, 106:* MAK, *126 (միայն հիշատակում է): Հովսեփյան, Խաղբակյանք, Ա, 117:*
Լուսանկ. 67

**204. Ս. ՍՏԵՓԱՆՈՍԻ** *ներսում, հյուսիս-արևելյան ավանդատան մուտքի գլխին՝ 6 տող.*



ԵՍ ԱՄԻՐՇԱՀՍ ՏՎԻ ԶԾԱԽՍ ՄԱՏՌՆԻՍ ՑԻՄ
Հ|ԱՅԼԱՅ ԱՐԴԵՆՑ. ԵՒ ՍՊԱՍԱՒՈՐՔ ՍԲ.
ՈՒԽ|ՏԻՍ ԽՈՍՏԱՑԱՆ :Բ: ՊԱ|ՏԱՐԱԳ ԴԱՎԹԻ
ԵՒ| ՅԱԿՈԲԱՅ ՏԱՐ|ՆԻՆ. ԿԱՏԱՐ[Ի]Չ[Ք]Ն
ԱՒՐՀՆԻՆ ԱՅ:

Ծանոթ. *Հրատարակիչներից Քաջբերունին, Ալիշանն ու Հովսեփյանը վերջում դնում են .ՋԻԷ: թվականը, բայց այժմ այն տեղում չկա: Անկասկած է, որ շինարարությանը ժամանակակից է:*

*Հրատ. Ջալալեանց, 212: Քաջբերունի, Արարատ, 1889, Բ, 103: Ալիշան, 120: Հովսեփյան, Խաղբակյանք, Գ, 76:* MAK, *127:*
Լուսանկ. 68

***205. Ս. ՍՏԵՓԱՆՈՍԻ** արևմտյան պատի հյուսիսային մասում, արտաքուստ. շինության արձանագրություն. 10 տող.*



. . . . . ԹԱԳԱՒՈՐԻՆ ԵՒ ԽԱՉԵՑԵԼՈՅՆ ԱՅ Ի ՅԱՐՔ|⌈ԱՅՈՒ⌉ԹՆ ՄԵԾԻՆ
ԵՒ ԲԱՐԷՊԱՇՏԻՆ ԱՊԱՂԱՅ ՂԱՆԻՆ| . . . . . ՀԱՅԿԱԶՆԵԱՅ ՏՈՀՄԻՍ ԵՒ
ՍԵՌԻՍ ԹՈՐԳՈՄԵԱՅ| Ի ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՆ ՏՆ. ՅԱԿՈԲԱՅ ԵՒ ՅԱՐԻՍԱԿԱՆ
ԵՒ ՔԱՋԱՏՈՀՄ ՅԻՇ|ԽԱՆՈՒԹՆ ՊՌՈՇԱՅ ԵՒ ՈՐԴՒՈՑՆ ՊԱՊԱՔԻՆ, ՀԱՍԱՆԱ,
ՄԱՆԿԱՆ ԷՅԱՉԻՑ, ՇԻՆԵՑԱՒ| ՍԲ. ԵԿԵՂԵՑԻՍ՝ ԲՆԱԿԱՐԱՆ ՓԱՌԱՑՆ ԱՅ ԵՒ
ՅԱՐԿ ՍՐԲՈՅՆ ՍՏԵՓԱՆՈՍԻ՝ ՅԵՐԿԱՐ ԿԵՆԴԱՆՈՒԹԻ. ՊԱՐՈՆԱՑՆ: ԵՒ
ՍԱՀՄԱՆԵՑԱՔ ՓՈԽՄԱՆ :Գ: ԱՒՐ ԱՄԷՆ ԵԿԵՂԵՑԻՔՍ ⌈Պ⌉ԱՏԱՐԱԳԵԼ ԶՔՍ|
ՄԵԾ ՊԱՐՈՆԻՆ ՄԵՐՈՅ ՊՌՈՇԱՅ. ԿԱՏԱՐԻՉՔ ԳՐՈՅՍ ԱՒՐՀՆԻՆ ՅԱՅ|: ՄԵՔ
ՊԱՐՈՆԱՅՔՍ ԵՒ ՄԻԱԲԱՆՔՍ ԱՐՁԱՆԱԳՐԵՑԱՔ ՈՐ . . . . . . . . . . .
. . . . . . . ՅԱՅ ԵՒ ՅԱՄԵՆԱՅՆ ՍՐԲՈՑՆ ԱՄԷՆ:

Մանր. *Արձանագրության սկզբից մեկ քարն ընկած է. առաջին երեք տողերի սկիզբը պակաս է։*

*Հինգերորդ տողի վերջին ՇԻՆԵՑԱՒ բառը և վեցերորդի սկզբից մինչև նախավերջին ՅԵՐԿԱՐ բառը ջնջել են և նորից փորագրել։ Իններորդ տողի երկրորդ և տասներորդի սկզբի մասերը դիտավորյալ տաշված-ջնջված են։*

*Թվականը պետք է լիներ առաջին տողի սկզբում, կորած քարի վրա, բայց և' շինարարական բովանդակությունը և' անձնանունները հաստատում են, որ, անկասկած, ժամանակակից է Նախորդին՝ 1273 թվականին։*

*Հրատ. Ջալալեանց, 208։ Քաջբերունի, Արարատ, 1889, Բ, 102։*
*Ալիշան, 120։ МАК, 132—133։ Հովսեփյան, Խաղբակյանք, Գ, 14—15։*
Լուսանկ. 68

**206. Ս. ՍՏԵՓԱՆՈՍԻ** *ներսում, հարավ-արևելյան ավանդատան երկրորդ հարկի մուտքի գլխին. 3 տող.*



ՅԱՆՈՒՆ ԱԾ ԵՍ ԴԵՂԱ :Խ: ԴԵԿԱՆ ՏԿԻ| ՄԱՏՈՒԱՆՍ. ՅԻՇԱՏԱԿ ԻՆՁ ԵՒ ԾՆՈՂԱՑ ԻՄՈՑ:

Ծանոթ. *Նվիրաբերությունն արված է, անշուշտ, շինությանը նպաստելու նպատակով, հետևաբար արձանագրությունը ժամանակակից է նախորդներին։*

Հրատ. Ջալալեանց, 212։ Ալիշան, 123։ МАК, 127։
Հովսեփյան, Խաղբակյանք, Գ, 76։

**207. Ս. ՍՏԵՓԱՆՈՍԻ** *ներսում, հյուսիս-արևմտյան ավանդատան մուտքի կամարակալ քարի վերին եզրերին, 2 տող.*



ՈՐՔ ԱՂԱՒԹԻՔ ԱՅՍՄ ՔԱՒԱՐԱՆԻՍ ՍԱՀԱԿ| ՅԱՂԱՒԹՍ ՅԻՇԵՑԷՔ:

Ծանոթ. *Սահակն, անշուշտ, նպաստել է ավանդատան շինությանը, հետևաբար արձանագրությունը ժամանակակից է նախորդներին։*

Հրատ. Ջալալեանց, 212։ Ալիշան, 124։ Հովսեփյան, Խաղբակյանք, Գ, 76։
Լուսանկ. 70

**208. Ս. ՍՏԵՓԱՆՈՍԻ** *հարավային պատի տակ, արտաքուստ, ներքին կամարի մի գոգավոր քարի վրա, 10 տող.*



ՅԱՆՈՒ|Ն ԱԾ ԵՍ| ԽԱԹՈՒ|Ն ԴՈՒ⌞Ս⌟⌞Տ⌟Ր| ԽԱԼԱՇԻ| ԵՏՈՒ :Խ:| ԴԵԿԱՆ. Տ|ՈՒԻ ՄԲ ԵԿԵ|ՂԵՑԻՍ. Կ|ԱՐԳԵՑ⌈ԻՆ⌉ . . .

Ծանոթ *Համարում ենք շինությանը ժամանակակից. նախ՝ որովհետև դրության տեղը և արձանագրության բովանդակությունը մատնացույց են անում, որ նվերը արվել է շենքի այդ մասի կառուցմանը օժանդակելու նպատակով. ապա՝ ԽԱԼԱՇ անունը համարում ենք ԽԱԼԱՑՇԱՀԻ կրճատ ձևը, որի ժառանգորդները և թոռները հետագա ժամանակներում են նվիրաբերություններ անում (տե՛ս հաջորդ. արձանագրությունները), մինչդեռ այս դեպքում նրա քույր Խաթունն է նվիրատուն։*

*Արձանագրության այս բեկորը Գ. Հովսեփյանը տեսել է գյուղամիջի տներից մեկում (տե՛ս Խաղբակյանք, Բ, 162)։*

Հրատ. Հովսեփյան, Գ, 84։
Լուսանկ. 71

***209. Ս. ՍՏԵՓԱՆՈՍԻ** արևմտյան մուտքի կամարակալ քարի վրա, արտաքուստ, 9 տող.*



ԹՎ. ։ՉԾԶ։ (1307) |ԿԱՄԱՒՆ ԱԾ. ԵՍ ԹԱՃԵՐՍ, ԴՈՒՍՏՐ| ՈՒՔԱՆԱ, ԱՄՈՒՍԻՆ ՀԱՍԱՆԱ ԱՍՊԱՐԱՊԵ|ՏԻՆ ՀԱՐՑ, ԼՐԴԻՐՑՆ ՊՌՌՇԱ, ԵՏՈՒ ԸՆԾԱ Ի ՀԱ|ԼԱԼ ԸՆՁԻՑ ԽՍՈՑ ՀԱՅՐԵՆԻ ՏԱՆՍ ՄԵՐ ԹԱՆԱՏԻ ՎԱՆԱՑ| ԱՌԱՋԻ ՎԱՐԱԳԻ ՍԲ. ՆՇԱՆԻՍ ԵՒ ՍԲ. ՀԱՐԱՊԵՏԻՍ. ՄԻԱԲԱՆՔՍ| ՍԱՀՄԱՆԵՑԻՆ ։Գ։ ՊԱՏԱՐԱԳ ԻՆՁ ։Ա։ ԱՒԱԳ ՀԻՆԳՇԱԲԱԹ ԱՒՐ ՀՈԳՈՑՆԳԱԼՍՏԷՆ ։Բ։ ՓՈԽՄԱՆ ԱԾԱԾՆԻՆ. ԿԱՏԱՐԻՉՔ|Ն ԱՒՐՀՆԻՆ։

Հրատ. *Ջալալեանց, 210։ Ալիշան, 121։ MAK, 127։*
*Հովսեփյան, Խաղբակյանք, Գ, 17։*
Լուսանկ. 70

***210. Ս. ՍՏԵՓԱՆՈՍԻ** հարավային պատին, արտաքուստ. 9 տող.*



ԿԱՄԱՒՆ ԱԾ. ԵՍ ՍԻՄԻԱՆՍ ՏԿԻ| ԶՄԵՐ ՀԱՅՐԵՆԻ ԻԳԻՆ, ՊԱՐՈՆ|ԱՑՆ ՈՂՈՐՄՈՒԹԲ Է ԱՁՈ,| ՄԱՄԱԽԱԹՈՒՆԻՆ ՍԲ. ՍՏԵՓԱՆՈՍԻ ԵՒ ՍԲ. ՆՇԱՆԻՍ| ՄԽԻԹԱՐԱ ՀՈԳՈՑՆ. ՄԻԱԲ|ԱՆՔ ՍԱՀՄԱՆԵՑԻՆ ։Գ։ ԺԱՄ ՏՐ| ԸՆԴԱՌԱՋԻՆ ։Բ։ ՄԽԻԹԱՐԱ| ։Ա։ ԻՆՁ Ի ԹՎԻՍ ։ՉԾԸ։ (1309)։

Ծանոթ. *Նվիրատուի անունն, անշուշտ, Սիմոնի ժողովրդական արտասանության ձևն է։ Ջալալյանը (էջ 208) այս արձանագրությունը կրկնել է, սխալմամբ նվիրատուի անունը Մարնանա վերծանելով։*

Հրատ. *Ջալալեանց, 210։ Ալիշան, 121։ MAK, 130։*
*Հովսեփյան, Խաղբակյանք, Գ, 17։*
Լուսանկ. 71

**211.** *Ս. ՍՏԵՓԱՆՈՍԻ արևելյան պատի կենտրոնական մասում, արտաքուստ. 9 տող.*



ԿԱՄԱՒՆ ԱՅ. ԵՍ ՀԱՄ|ԻԿ ՇԻՆԵՑԻ ԶԱՄԱՐ|ԱՆՈՅՆ ԵՒ ՏՎԻ ՎԱՐԱԳ|Ա ՄԲ. ՆՇԱՆԻՍ ՍԲ. ՍՏ|ԵՓԱՆՈՍԻ. ՎԱՐԴԱՊԵՏ ,ԵՒ, ՄԻԱԲԱՆՔՍ ՏՎԻՆ :Դ: ԺԱՄ ՔԱՌԱՍՆ|ԻՑ ՏԱՒՆԻՆ. ԿԱՏԱՐԻՉ|ՔՆ ԱԻՐՀՆԻՆ ՅԱՅ. ԹՎԻՍ| :ՁԿ: (1311):

*Ծանոթ. Բնագրի մեջ թվի վերջին տողը շարունակված է, բայց մանր տառերով և մի նոր արձանագրության սկիզբն է։*

*Հրատ. Քաջբերունի, Արարատ, 1889, Բ, 104; Ալիշան, 120;*
MAK, *129; Հովսեփյան, Խաղբակյանք, Գ, 78;*
Լուսանկ. 72

**212.** *Ս. ՍՏԵՓԱՆՈՍԻ արևմտյան մուտքի կամարի շրջանակից վեր, արտաքուստ, 5 տող.*



ԿԱՄԱՒՆ ԱՅ. ԵՍ ԱԻԹԱԽԱԹՈՒՆՍ ԱՄՈՒՍԻՆ ՎԱՂԹԱՆԿԱ ՈՐԴ|ՈՅ ԽԱՂԱՇԱՀԻ ՏՎԻ :Ճ: ԴԵԿԱՆ ՍԲ ՍՏԵՓԱՆՈՍԻՍ ՎԱՐԱԳ|Ա ՍԲ ՆՇԱՆԻՍ. ՎԱՐԴԱՊԵՏՍ ՄԻԱԲԱՆՔՍ ՍԱՀՄԱՆԵՑԻՆ :Դ: ՍԻՐ ՊԱՏԱ,Ր,ԱԳ :Բ: ԾԱՌԱՅԱՐԴԱՐԻՆ :Բ: ՋԱՏԿԻՆ. ԿԱՏԱՐԻՉՔՆ ԱԻՐՀՆ|ԻՆ ԹՎ. :ՁԿԲ: (1313) ԽԱՓԱՆՈՂՆ ԴԱՏԻ:

*Հրատ. Ջալալեանց, Բ, 211; Ալիշան, 122; Հովսեփյան, Խաղբակյանք, Գ, 77—78;*
Լուսանկ. 73

**213. Ս. ՍՏԵՓԱՆՈՍԻ** *հարավային պատի արևելյան մասում, արտաքուստ, 6 տող*



ԿԱՄ[Ա]Ի ԿԵՆԱՐԱՐԻՆ ԵՒ ԿՈՒՍԱԾԻՆ ԱՆՄԱՀ ԹԱԳԱՒՈՐԻՆ, ՑԱ[Մ]ՇԽԱՐՀԱԿԱ-ԼՈՒԹԵ[Ա]Մ ԱՐԴԼՈՒՆԻ[Ն], ԻՇԽԱՆՈՒԹ̅Ն. ԽՈՇԱՔԻՆ, ՈԴԼՈՐՍՈՒԹ[ԵԱՄ]ԲՆ ՊԱՊԱՔԻՆ, ՀԱՄ[Ա]ՆԱՑ[Ս] ԵՍ ԽՈՒԹԼ[ՈՒ]ԲԷԿՍ ԹՈՌՆ ԽԱԼԱՑՇԱՀԻՆ, ՈՐԴԻ ՄԽԻԹԱՐԱՑ, ՏՎԻ ՋՄԵՐ [Տ]ՆԿԱԾ ԱՑԳԻՆ, Զ[ԳԻ]ԱՑԼԱՐԵՑ ՀՈՂՆ ՏՎԻ Ի Ս̅Բ ՍՏԵՓԱՆՈՍ. ՄԻԱՑԲԱՆՔ ՍԱՀՄԱՆԵՑԻՆ :Ը: ԺԱՄ[. . .] ՍԻՆ :Գ: ՀԱՍԱՆԱՑ ԵՒ ՍԱՐԳՍԻ ԻՄ ԱՂԲԵՐԱՑՆ ՀՈԳՈՑՆ. Ի ԹՎ. :Զ:------[ԿԱՏԱՐԻՉՔՆ] ԱՒՐՀՆԻՆ Ց̅Ա̅Ց:

Ծանոթ. *Արձանագրության տողերի առաջին և վերջին մասերի քարերն ընկած-կորած են։ Տեղում գտնվեց միայն առաջին երեք տողերի սկզբի մասերը պարունակող քարը։*

*Կորել է նաև թվականի տասնավորը և միավորը պարունակող քարը։ Գրված պիտի լինի սակայն 1284-1292 թթ. արանքում, Պռոշի մահվանից հետո, որի անունը չի հիշատակվում և Ամիր Հասանի մահվանից առաջ, որը հիշվում է որպես կենդանի (մեռել է 1292 թ.)։*

*Հրատ. Ջալալեանց, 208։ Ալիշան, Սիսական, 120։*
MAK, *129։ Հովսեփյան, Խաղբակյանք, Դ, 15—16։*
Լուսանկ. 74

**214. Ս. ՍՏԵՓԱՆՈՍԻ** *հարավային պատի արևելյան մասում, արտաքուստ, Նախորդի տակ. 3 տող.*



Կամաւն Ա̅Յ ես ՍԱՆՃԱՐՍ ու ԹԱՃՄԼԸՔՍ ՄԻԱԲԱՆԵՑԱՔ Ս̅Բ ՍՏԵ[Փ]անոսի եւ տվաք զկկու ԱՔԱՐԻՆ ՀՈՂՆ, ՀԻՎՆԵՆՑ ՀՈՂՈՎՆ. ՄԻԱԲԱՆՔՍ ՏՎԻՆ հինգ ժամ վարագայ խաչին ՏԱՐՆԻՆ. ԿԱՏՎՀԱՏԻՆ ԱԻԳԱՆ ԼԼ ՏՎԱՔ:

Ծանոթ. *Բոլոր երեք տողերի սկզբի մասերը պարունակող քարը կորել է։ Այն իր տեղումն է եղել Ջալալյանի ժամանակ, որից և լրացնում ենք։*

*Ժամանակակից է Նախորդին (1284—1292), որովհետև գրված է նրա անմիջական տակին, նույն գրչի ձեռքով և պատկանում է նույն ընտանիքին (Թաճմելիքը Խութլուբեկի քույրն է, իսկ Սանճարը վերջինիս ամուսինը)։*

*Հավանաբար նույն այս Սանճարն է, որ Աղավնաձոր գյուղի մոտ Ուլգյուր կոչված վայրում գտնվող արձանագրությամբ հող է նվիրել Լկնգեցուն՝ 1281 թ. և Նորավանքում մնացած արձանագրությամբ նույն վանքին է նվիրել Տանձիկ գյուղը՝ 1303 թ. (տե՛ս 216):*

Հրատ. *Ջալալեանց, 208, Ալիշան, 123,*

*Հովսեփյան, Խաղբակյանք, Դ, 77.*

Լուսանկ. 75

***215. Ս. ՍՏԵՓԱՆՈՍԻ** հյուսիսային պատի արևելյան անկյունում, արտաքուստ, 7 տող.*



ԿԱՄԱՒՆ ԱՑ. ԵՍ ԽՈՒԹԼՈՒԲԷԿՍ ԻՄ| ՊԱՐՈՆԱՑՆ ՈՂՈՐՄՈՒԹԲՆ. Է|ԱԶՈ, ՄԱՄԱԽԱԹՈՒՆԻՆ ԶԱԳԼԱ|Լ-ՏԵԳԻՆ ՀՈԳՆ ՍԲ. ՍՏԵՓԱՆ|ՈՍԻ ՏՎԻ. ՄԻԱԲԱՆՔՍ ԿԱՐԳԵՑ|ԻՆ :Բ: ԺԱՄ ՄԵՐ ՍԲ. ՍՏԵՓԱՆՈՍԻ| ՏԱԻՆԻՍ :Ա: ՆԱՐՊՆՋԻՆ :Ա: ԻՆՁ:

Ծանոթ. *Ժամանակակից է նախորդներին, ավելի ճիշտ Պռոշյան Էաչիի իշխանության տարիներին՝ 1300—1317 թթ.:*

Հրատ. *Ջալալեանց, 210, Ալիշան, 121—122,* MAK, *130,*

*Հովսեփյան, Խաղբակյանք, Դ, 18,*

Լուսանկ. 76

***216. Ս. ՍՏԵՓԱՆՈՍԻ** հյուսիսային պատի կենտրոնում, ներքուստ, 5 տող.*



ԿԱՄԱՒՆ ԱՑ. ԵՍ ԹԱՃՄԼԻՔՍ, ԴՈՒՍՏՐ ՄԽԻ|ԹԱՐԱ ԹՈՒՆ ԽԱԼԱՇԱՀԻՆ ՏՎԻ :Ա: ՎԵՑԿԻ ԻՄ| ԳԵՐԵԶՄԱՆԱՏՈՒՆՍ. ՄԻԱԲԱՆՔՍ ՍԱՀՄԱՆԵՑԻՆ :Գ: ԺԱՄ ՍԱՆԴԽՏՈ ՏԱԻՆԻՆ :Բ: ԻՆՁ :Բ| ԻՄ ՄԱՒՐ. ԿԱՏԱՐԻՉՔ ԱԻՐՀՆԻՆ ԱՑ:

Ծանոթ. *Թաճմելիքը Խալալշահի ընտանիքից է, Խութլու բեկի քույրը (տե՛ս արձ. 214). հետևաբար նրան ժամանակակից.* XIV *դարի առաջին տասնամյակներ:*

Հրատ. *Ջալալեանց, 212, Ալիշան, 123* MAK, *127, Հովսեփյան, Դ, 77.*



***217. Ս. ՍՏԵՓԱՆՈՍԻ** արևմտյան պատի նեղ պատուհանի շուրջը, շրջանակից ներս, արտաքուստ, 10 տող.*

ԿԱՄԱՒՆ ԱՑ ԵՍ ԱՍԼԱՆ| ԱՓԱՑՍ ԵՒ ԻՄ ՈՐԴԻՔՍ ՄԻԱԲԱՆ|ԵՑԱՔ ՍԲ ՍՏԵՓԱՆՈՍԻՍ ԵՒ ՍԲ ՆՇԱՆԻՍ| ԵՒ ՏՈՒԱՔ :Ճ: Գ|Ե|Կ|ԱՆ| ԸՆ|ԾԱ, ՎԱՐԴԱՊԵՏ ԵՒ ՄԻԱԲԱՆՔ ՍԱՀՄԱՆԵՑ|ԻՆ|| ՁՇԱԲ|ԱԹ| ԱՒՐ ՉԱՏԿԻՆ. ԿԱՏԱՐԻՉՔՆ |ԱԻՐՀՆԻՆ| ՅԱՑ. Ի ԹՎ. :ՉՀԵ: (1326)

Հրատ. *Ալիշան, 122, Հովսեփյան, Խաղբակյանք, Դ, 79,*

*Ջալալեան, II, 211,*

**218. Ս. ՍՏԵՓԱՆՈՍԻ** *արևմտյան պատի տակ, արտաքուստ, ընկած երեսպատման մի քարի վրա. 5 տող.*



ԵՍ ՎԱՐՀԱՄ ՇԱՀՈՒՌԵՑ|Ի ՄԻԱԲԱՆԵ|ՑԱՑ ԹԱՆԱՏԻ ՎԱՆԱՑ ԵՒ Տ|ՎԻ . . . | ՏԱՓՈՑ ՀՈՂԵՐՆ ՍԲ ՍՏԵՓԱՆՈՍԻՆ |ՄԻԱԲԱՆՔՍ ՍՍՀՄԱՆԵՑԻՆ :Գ: ԱԻՐ ՊԱՏԱՐԱԳ . . | ԿԱՏԱՐԻՉՔՆ ԱԻՐՀ|ՆԻՆ| ԱՑ ԽԱՓԱՆԻՉ|ՔՆ ԴԱՏԻՆ| ԱՑ.

*Ծանոթ. Արձանագրության նախնական տեղն անորոշ է։ Վահրամ Շահուռնեցին Երարանի տեր ու իշխանն էր (այժմյան Հերհերի), որը 1310 թ. արձանագրությունների մեջ արդեն չի հիշատակվում, հետևաբար այս արձանագրությունը վերաբերում է* XIII *դարի վերջերին կամ* XIV *սկզբներին։*

Լուսանկ. 77

**219. Ս. ՍՏԵՓԱՆՈՍԻ** *արևմտյան պատի հարավային մասում, արտաքուստ, մուտքին կից, 11 տող.*



ԿԱՄԱԻՆ ԱՑ ԵՍ ՌՈՒԲԱՆ. ՈՐ|ԴԻ Վ|ԱՐ|ՀԱՄ ՇԱՀՈՒՌՆԵՑ|Ի ՏՐ ԵՐԵՐԱՆ|Ա| ՄԻԱԲԱՆ ՍԲ ՍՏԵՓ|ԱՆՈՍԻ ԵՏՈՒ ՀԱԼԱԼ ՀԵՐԵՆԵՑ| ՍՐ ԻՆՋ ԲԱԺԻՆ ԷՐ ՀԱՍԵԼ| ՋԽԱԼԻՆ ԸՂԱԼԱՆԻՆ · ՀՈՂ|ԵՐՆ ԻԻՐ :Դ: ՀԱՏՈՎՆ ԵՒ ԹՄԲ|ԵՐՈՎՆ. ՎԱՐԴԱՊԵՏՆ ԵՒ ՄԻԱԲԱՆՔՆ| ՍԱՀՄԱՆԵՑԻՆ ԻՆՋ :Բ.| ԺԱՄ ՍԲ. ՆՇԱՆԻՆ ՏԱԻ|ՆԻՆ ԿԱՏԱՐԻ ԹՎ. :Զ|ՁԵ: (1336):

*Հրատ. Ջալալեանց, 209-210, Ալիշան, 122,* MAK, *132, Հովսեփյան, Խաղբակյանք, Գ, 79—80,*

Լուսանկ. 78



**220. Ս. ՍՏԵՓԱՆՈՍԻ** *արևմտյան պատի հյուսիսային մասում, ներքուստ, 10 տող.*

ԿԱՄԱԻ ԱՄԵՆԱՑԿԱԼԻՆ ԱՑ| ԵՍ ՋՈՒՄԷՍ, ԹՌՌՆ ԱՄԻՐ ՀԱՍ|Ա|ՆԱՑ, ՈՐԴԻ ԷԱՋՈ ԵՒ ԿԻՆԱԿԻՑՆ ԻՄ ԽՈՍ ՍԴՋԷՆ| ՏՎԱՔ ՋԱԻԱԳ ԱԿԱՆ ՋՐԱՂԱՑՆ ՍԲ. ՍՏԵՓԱՆՈՍԻ| ԴԵՐԵՋՄԱՆԻՍ. Վ|ԱՐ|Դ|ԱՊԵՏ|, ՄԻԱԲԱՆՔ|Ս| ՍԱՀՄԱՆԵՑԻՆ :Դ:| ԱԻՐ ՊԱՏԱՐԱԳ ՍԲ. ԽԱՉԻՆ| ՏԱԻՆԻՆ :Բ: ԻՄ ԵՂԲԱԻՐՆ ՊԱՐ|ՈՆ ԱՍԱԴԻՆ :Ա: ԷԼԽՈՒԹԼՈՑ|. ԿԱՏԱՐՈՂՔՆ ԱԻՐՀՆԻՆ ԽԱՓԱՆՈՂՔՆ| ԴԱՏԻՆ ՅԱՑ:

Ծանոթ. Նվիրատուները Պռոշյան տոհմից են և XIV դարի առաջին կեսի գործիչներ։

Հրատ. Ջալալյանց, 211—212։ Ալիշան, 122։ ՄԱԿ, 128։
Հովսեփյան, Խաղբակյանք, Գ, 22—23։

**221. Ս. ՍՏԵՓԱՆՈՍԻ** *արևմտյան պատի հարավային մասում, ներքուստ, 4 տող.*



ԵՍ ՍԻՒՔՍՈՒԽԼԻՏՍ :Խ: Դ[Ե]|ԿԱՆ ՏՎԻ ԵԿԵՂԵՑՈՅՍ
:Բ: ԺԱՄ ՍԲ. ՍԱՐԳՍԻՆ. ԿԱ, ՏԱՐԻՔՆ ԱԻՐՀՆԻՆ:

Հրատ. Ջալալեանց, 212։ Ալիշան, 123։ ՄԱԿ, 128։
Հովսեփյան, Խաղբակյանք, Գ, 83—84։

**222. Ս. ՍՏԵՓԱՆՈՍԻ** *հյուսիս-արևելյան ավանդատան պատի վերին մասում. զույգ խաչերից վերև, 4 տող.*



ԿԱՆԳՆԵՑԱՒ ԽԱ|ՉՍ Ի ԲԱՐ[Է]|ԽԱԻՍ ՊԵ|ՏՐՈՍԻ ԵՒ
ԾՆՈՂԱՑ ԻՒՐՈՑ.

Հրատ. Ալիշան, 124։ ՄԱԿ, 127։ Հովսեփյան, Խաղբակյանք, Գ, 84։

**223. Ս. ՍՏԵՓԱՆՈՍԻ** *արևմտյան պատի հարավային մասում, արտաքուստ. 10 տող,*



ԿԱՄԱՒ ԱՄԵՆԱԿԱԼԻՆ ԱԾ. ԵՍ ՊԷՆԱ, ՈՐԴԻ ՍՄԲ|ԱՏԱ, ԹՈՌՆ ԼԻՊԱՐՏԻ, ՏԵՐ ՓԱՆՃԱԹԱՂԻՆ ԵՒ| ԱՄՈՒՍԻՆ ԻՄ ՍՈՒՍԱ ՄԻԱԲԱՆԵՑԱՔ ՍԲ. ՍՏԵՓԱՆՈՍԻՍ| ԵՒ ՏՈՒԱՔ Ի ՄԵՐ ՀԱԼԱԼ ՀԱՅՐԷՆԵԱՑ ՈՐ Ի Փ|ԱՆՋԱԹԱՂԻՆ ՋՄԱՂՄԱՆԵՆՑ ԵՒ ՉԱՒԱՆՇԵՆ|Ց ԷԳԻՆ ՄԵՐ ՀՈԳՈՑՍ ԲԱԺԻՆՆ. ԷՓՐԵՄ ՎԱՐԴԱՊԵՏՆ ԵՒ ՄԻԱ-ԲԱՆ|ՔՆ ՍԱՀՄԱՆԵՑԻՆ ՄԵԶ ԱՃԱԾՆԻՆ ՏՕՆԻՆ| :Չ: ՊԱՏԱՐԱԳ. ԵՒ ՈՎ ՈՐ ՄԵՐ ՀՈԳՈՑ ՏՈՒԱԾ ՎԱԽՄ|ԻՍ ՀԱԿԱՌԱԿ ԿԱՑ :ՅԺԸ: ՅԱՅՐԱՊԵՏԱՑՆ Ն|ԶՈՎԵԱԼ ԵՂԻՑԻ:
:ՉՂԷ: (1348):

Հրատ. Ջալալեանց, 209։ Ալիշան, 122։
ՄԱԿ, 132։ Հովսեփյան, Խաղբակյանք, Գ. 80։
Լուսանկ. 79

**224. Ս. ՍՏԵՓԱՆՈՍԻ** *արևմտյան պատի հարավային մասի կենտրոնում, նախորդից վեր արտաքուստ, 5 տող.*



ՅԱՆՈՒՆ ԱՅ. ԵՍ ԲՈՒԲԱՅԻՍ ԹՈՌՆՍ ՍԱՄԱԴԱՒԼԻՆ, ՈՐԴԻՍ| ՅԱՍՈՒՆԱՅ. ԵՍ ՍԱՐԳԻՍ ՈՐ ՏՎԻ ԹԱՆԱՏԻ ՎԱՆԻՑ ՍԲ ՍՏԵՓԱՆՈՍԻ ՁՁԱ|ՏԻՆԱՑ ՎԱՐԻՆ ՀՈՂՆ ՆԱՑԱՆ ՀԱՅՐԵՆԻՔ. ՆԱՔԱՆ ՏՎԻՆ ԻՆՁ ԶԱՅՏՆՈՒ|ԹԵ| :Ե: ԱԻՐ :Թ: ԽՈՐԱՆ. ՈՎ ԽԱՓԱՆԷ :ՅԺԸ: ՀԱՅՐԱՊԵՏԱՑՆ Ն|ԶՈՎԵԱԼ ԵՂԻՑԻ:

Ծանոթ. *Հավանաբար պատկանում է XIV դարի առաջին կեսին, որովհետև գրված է նախորդից վերև՝ նույն գրչի ձեռքով։*

*Հրատ. Ջալալեանց, 209, Ալիշան, 123,*
MAK, *131, Հովսեփյան, Խաղբակյանք, Գ. 82,*
Լուսանկ. 80

**225. Ս. ՍՏԵՓԱՆՈՍԻ** *արևմտյան պատի հյուսիսային մասում, արտաքուստ, շինարարական մեծ արձանագրության տակին (№ 2), 3 տող.*



ԿԱՄԱՒ ԱՅ. ԵՍ ԲԱՒՐԻՆԱՑ ՄԻԱՅԲԱՆԵՑԱՑ ՍԲ ՈՒԽՏԻՍ. ԵՏՈՒ Ի| ՅԻՄ ՀԱԼԱԼ ԸՆՁԻՑ ԸՆԶԱՅ Ի ՍԲ. ՍՏԵՓԱՆՈՍՍ. ՄԻԱՅԲԱՆՔՍ| ՍԱՀՄԱՆԵՑԻՆ ԱՄԷՆ ԱԻՐ ՊԱՏԱՐԱԳ ՍԲ. ԽԱՉԻՆ. ԿԱՏԱՐԻՉՔՆ ԱԻՐ˪Հ˩ՆԻՆ ՅԱՅ:

Ծանոթ. *Պատարագի թիվը անորոշ է, հրատարակիչներից ոմանք :Ա: և ուրիշները :Բ: են նշանակել։ Բնագրում կցումներով մի ամբողջ բառ է, որը միայն ԱՄԷՆ կարելի է կարդալ, բայց առնված է թվական նշանակող կետերի մեջ. համարում ենք գրչի վրիպում։ Վերջին նախադասության բառերը երևանց են։ Հավանաբար պատկանում են XIV դարի սկզբին։*

*Հրատ. Ջալալեանց, 211, Ալիշան, 123,*
MAK, *133, Հովսեփյան, Խաղբակյանք, Գ, 83,*
Լուսանկ. 81

**226. Ս. ՍՏԵՓԱՆՈՍԻ** *արևմտյան պատի հյուսիսային մասում, արտաքուստ, նախորդից ներքև, 6 տող.*



ԿԱՄԱՒՆ ԱՅ. ԱՄԵՆԱԿԱԼԻՆ. ԵՍ ԻՎԱՆԻ, ՈՐԴԻ ԽԱԼԹԻՆ ԵՒ ԱՄՈՒՍԻՆ| ԻՄ ՍԱԽՈՒԽ ԵՒ ՄՈՒՐԱՏ ՓԱՇԷՍ ՄԻԱԲԱՆԵՑԱՔ ՍԲ. ՆՇԱՆԻՍ ԵՒ| ՍԲ ՍՏԵՓԱՆՈՍԻՍ ԵՒ ՏՎԻՔ ԶՄԵՐ ԳՆԱԾ ԻԳԻՆ ˪Ի˩ ՍԽՏՈՐԱԿԷՋ :Ս:

ՀՈՂ, Ի ՄԵ|ԾԱՔԱՐ. ՄԻԱԲԱՆՔ ԽՈՍՏԱՑԱՆ :Դ: ՊԱՏԱՐԱԳ :Բ: ԻՆՁ :Ա: ՍԱԽՈԽԻՆ :Ա:| ԷՍՈՒԿԱՆԻՆ ՀԱՄԲԱՐՁՄԱՆ. ԿԱՏԱՐԻՉՔՆ Ա[ՒՐ]ՀՆԻՆ, ԽԱՓԱՆԻՉՔՆ ԴԱՏԻ[Ն] Ի ՏԷ. ԹՎ. :ՊԲ: (1353):

*Հրատ. Ջալալեանց, 209։ Ալիշան, 123։* MAK, *133։ Հովսեփյան, Խաղբակյանք, Գ, 83։ Բոլորի մոտ էլ թերի է և խիստ աղճատված։*

Լուսանկ. 82 *(վերջին երկու տողերի սկզբի մի քանի տառերը ծածկված են պատի տակ լնկած այլ արձանագրված քարով)։*

***227. Ս. ՍՏԵՓԱՆՈՍԻ** արևմտյան պատի հարավային մասում, կից մուտքի գլխին, արտաքուստ, 6 տող.*



ԿԱՄԱՒ ԱԾ. ԵՍ Ս[Ա]ՐՔԻՍ Ս[ԱՐ]ՔԱՒԱԳ. ՑԻՇԵՑԷՔ ԿԱՐԴԱԼՈՎ ԿԱՄ ԱՒՐԻՆԱ|ԿԵԼՈՎ. ՅԻՇԵՑԷՔ Ի ՄԱՔՐԱՑՓԱՅԼ| ԱՂԱՒԹՍ ՁԵՐ ԵՒ ԱԾ. ՁԵԶ ՅԻՇԻ ԻՒՐ| ԱՐՔԱՅՈՒԹԵԱՆ ԱՄ|ԷՆ:

Ծանոթ. *Սարկավագ բառը առաջին տողի մեջ գրված է տառերի կարգի շփոթությամբ։*

Լուսանկ. 83

***228. Ս. ՍՏԵՓԱՆՈՍԻ** արևմտյան պատի հարավային մասի վերևում, արտաքուստ, 7 տող.*



ԿԱՄԱՒ ԱՄԵՆԱ[Կ]ԱԼԻՆ ԱՑ ԵՒ ՈՂՈՐՄՈՒԹԲ[Ն]. ԻՄ ՊԱՐՈՆԱՑ . . ԵՍ ԲՈՒՂԻԿՍ . . . . . . . . ՍԲ ՍՏԵՓԱՆՈ[Ս]Ի. . . ԻՄ ՀԱԼԱԼ[Ի] . . . ԸՆՁԻՑ ԸՆԾԱ . . . ՄԵԶ ԺԱՄ ՍԲ. Գ[Ր]Ի[Գ]ՈՐԻՆ ՏԱԻՆ[Ի]Ն[,]
ԿԱՏԱՐԻՉՔՆ ԱՒՐՀՆԻՆ ՑԱՑ. :Բ: ԺԱՄ . . . :Ա: ԽԱԼԹԻՆ :Ա: ԲՈՒՂԻԿԻՆ:

Ծանոթ. *Առաջին հինգ տողից մնացել է միայն մի քար։ Հավանաբար երկու քարեր են, որոնց վրա պետք է լիներ դրանց շարունակությունը, կորել են։ 6-րդ տողը լրիվ է և երեք քարի վրա։*

*7-րդ տողը նույնպես երեք քարի վրա է եղել, բայց միջին քարը հնում ընկել է և այժմ նրա տեղը մի չգրված քար է։ Այս վերջին տողը խոշորատառ և գեղագիր է։*

Լուսանկ. 84

***229. Ս. ՍՏԵՓԱՆՈՍԻ** արևմտյան պատի հարավային մասում, նախորդից ներքև, երեսպատման մի քարի վրա.*



ԿԱՄ[Ա]ՒՆ Ա

Ծանոթ. *Հավանաբար նորոգումների ժամանակ է ագուցված. բայց և սկսված և չշարունակված արձանագրության մաս է։*

Լուսանկ. 85

***230. Ս. ՍՏԵՓԱՆՈՍԻ*** *հարավային պատի արևմտյան մասում, աղավնի հոշոտող բազեի քանդակի տակ, արտաքուստ, 3 տող.*



ԿԱՄԱՒ Ա̅Յ. ԵՍ ԱՐԵՒՀԱՏ ՄԻԱՅԲԱՆՆԵՑԱՅ Ս̅Բ̅. ՍՏԵՓԱՆ|ՈՍԻ[Ս] ԵՒ ՏՎ.Ի :Ի: ԴԵԿԱՆ ԵԿԵՂ.ԵՑՈՑՍ. ԵՒ ՄԻԱՅԲԱՆՔ ՍԱՀՄԱՆ|ԵՑԻՆ :Ա: ԱՒՐ ԺԱՄ ԽԱՉԳԻՒՏԻՆ. ԿԱՏԱՐԻՉՔՆ ԱՒՐՀՆԻՆ Ց̅Ա̅Ց:

Հրատ. *Ջալալեանց, 211։ Ալիշան, 123։*
ՄԱԿ, *130։ Հովսեփյան, Խաղբակյանք, Գ, 82։*
Լուսանկ. 85

***231. Ս. ՍՏԵՓԱՆՈՍԻ*** *հարավային պատի արևելյան մասում, արտաքուստ, արևի ժամացույց, վրան երկու աղավնիներ բաժակից ջուր են խմում և տակին 3 տող.*



ԿԱՄԱՒ Ա̅Յ ԵՍ ՄԵԹԱՐ ՄԻԱՅԲԱՆՆԵՑԱՅ| ՍԲ ԵԿԵՂ.ԵՑԻՍ ԵՒ ՏՎ.Ի :Ի: ԴԵԿԱՆ ԵՒ ՄԻԱՅԲԱՆՔՍ ՍՍ|ՀՄԱՆԵՑԻՆ :Ս: ԱՒՐ ԺԱՄ ՆԱՎ.ԱՑՍԱՐ[Դ]ԻՆ. ԿԱՏԱՐԻՉՔ Ա[Ւ]ՐՀ[Ն]ԻՆ:

Ծանոթ. *Բոլոր հրատարակիչները նվիրատուի անունը Սեխար են վերծանել, որ սխալ է։*

Հրատ. *Ջալալեանց, 210—211։ Ալիշան, 123։*
ՄԱԿ, *130։ Հովսեփյան, Խաղբակյանք, Գ. 81։*
Լուսանկ. 86

***232. Ս. ՍՏԵՓԱՆՈՍԻ*** *հարավային պատի արևելյան մասում, արտաքուստ, նախորդից ներքև, խորշին կից. 5 տող.*



ԿԱՄԱՒՆ Ա̅Յ ԵՍ ԹԼԻԿՍ ՄԻԱ[Յ]ԲԱՆՆԵՑԱ Ս̅Բ̅ ՈՒԽՏԻՍ ԵՒ ՏՎ.Ի| Ը.ՆԾԱ. ՄԻԱԲԱՆՔՍ ՏՎ.ԻՆ| :Բ: ԺԱՄ ԹԵԿՂ.Ի ՏԱՒՆԻՆ.| ԿԱՏԱՐԻՉՔՆ ԱՒՐՀՆԻՆ:

Հրատ. *Ջալալեանց, 210։ Ալիշան, 122։*
ՄԱԿ, *129։ Հովսեփյան, Խաղբակյանք, Գ, 81։*
Լուսանկ. 87

**233. Ս. ՍՏԵՓԱՆՈՍԻ** *հարավային պատի արևելյան մասում, արտաքուստ, նախորդից ներքև, 7 տող.*



ԿԱՄԱՒՆ ԱՅ. ԵՍ ԳԵ|ՏՐՈՍ ՑԻՄ ՀԱԼ|ԱԼ ԱՐԴԵԱՆՑ ԵՏՈՒ| ԾԱԽՍ ՋԱՆԿԱԿԻՍ. ՍԻ|ԱՔԱՆՔՍ ՍԱՀՄԱՆԵՑ|ԻՆ :Բ: ԺԱՄ ԵՐԵԻՄԱՆ ԽԱ|ՋԻՆ. ԿԱՏԱՐԻՉՆ ԱԻՐՀ[ՆԻ]:

*Հրատ. Ալիշան, 124։ Հովսեփյան, Խաղբակյանք, Գ, 81։ Քաջբերունի, Արարատ, 1889, Բ, 104։*
Լուսանկ. 88

**234. Ս. ՍՏԵՓԱՆՈՍԻ** *հյուսիսային պատի արևելյան մասում, արտաքուստ, կից Ծուծլու բեկի արձանագրությանը, 7 տող.*



ԿԱՆԿՆԵՑԱԻ| ԽԱՉՍ ԲԱՐ[Է]ԽԱԻ|Ս ԽԱՉԱՑՏՐԻՆ ԵՒ ԻԻՐ ԿԵՆԱԿ|ՑԻՆ ԱՐՉՈՒՔԱՆԻՆ| ԹՎ. :ՌԳ: (1554)

*Հրատ. Հովսեփյան, Խաղբակյանք, Գ, 85։*

**235. Ս. ՍՏԵՓԱՆՈՍԻ** *արևելյան պատի հարավային նիշի մեջ. արտաքուստ, 10 տող.*



ԵՍ ՇԱՀ|ՋԱՄԱՆԻ|Ն ԿԱՆԿ[ՆԵ]ՑԻ Խ|ԱՉ[Ս] ՄԽԻԹԱՐ|Ի[Ն] ԴԱՏ|ՈՍԻՆ. ՈՎ ԿԱՐԴ|ԷՔ . . . ԹՎ.: :ՌԾԴ: (1605)

*Հրատ. Հովսեփյան, Խաղբակյանք, Գ. 85։ Քաջբերունի, Արարատ, 1889, Բ, 104։*

**236. Ս. ՍՏԵՓԱՆՈՍԻ** *արևմտյան պատի տակ, արտաքուստ, թափված՝ երեսպատման արձանագրված քարերի վրա.*



ԿԱՄԱՒ Ա̅Ց̅. ԵՍ ՈՒՏԱՐ ԵՒ ԱՄՈՒՍԻՆ ԻՄ ԳՈՒՌ|ՃԻԿ ՄԻԱԲԱՆԵՑԱՔ ՍԲ.
ՍՏԵՓԱՆՈՍԻ ԵՒ ՏՎԱՔ Ի| ՀԱԼԱԼ ԸՆՉԻՑ ՄԵԶ ՀՈԳՈԲԱԺԻՆ. ՎԱՐԴԱՊԵՏ
ԵՒ| ՄԻԱԲԱՆՔՆ ՍԱՀՄԱՆԵՑԻՆ ԾԱՌԶԱՐԴԱՐԻՆ :Զ: ՊԱՏԱՐԱԳ.| Ի:Դ: ԻՒՆՁ
:Բ: ԳՈՒՌՃԻԿԻՆ. ԿԱՏ|ԱՐ|ԻՉՔՆ ՈՐՀՆԻՆ ՑԱ̅Յ̅Ւ:

**Ծանոթ.** *Ջարդված են քարի ստորին ծայրերը՝ վերջին տողի սկզբի և վերջին մասերից։*

*Հրատ. Ալիշան, 123—124. Ջալալեանց, 212։*

Լուսանկ. 89

**237. ՆԱԽՈՐԴԻ** *մոտ մեկ ուրիշը. 5 տող.*



ԿԱՄԱՒ Ա̅Ց̅. ԱՍՄԵՐ · . . . . .|
ԱՄՊԱՏԱ. ՓԱԽՐԱԴԱՒԼԻՆ · . . . .|
Ա̅Ց̅. ՏՎԱՔ ՋԻՒԱՆՈ · . . . . .|
Ա. ՀՈՂՆ ԴՐԱՆ ՋԱՂԱՑԻՆ · . . .|
ԱՆՈՍ ԳՐԵՑԻՆ :Ե: ԱՒՐ ՊԱՏԱՐԱԳ...|

**Ծանոթ.** *Նվիրատուների մեջ Փախրադավլայի անվան հիշատակությունն ապացույց է արձանագրության XIII դարի վերջերին պատկանելուն, որովհետև Փախրադավլեն կարող է միայն Տարսայիճի որդի, պատմագիր Ստ. Օրբելյանի եղբայրը լինել, որը մահացել է 1296 թ.։ Արձանագրության նախնական տեղն անորոշ է։*

Լուսանկ. 90

**238. Ս. ՆՇԱՆԻ** *արևմտյան պատի հարավային մասում, արտաքուստ, խաչերի տակ. 3 տող.*



ԿԱ[Ն]ԿՆԵՑԱՒ ԽԱՉՍ| ԲԱՐԵԽԱՒՍ|
ՄՈՒՔԷ[Լ]ԻՆ:

Լուսանկ. 91

**239. ՆՈՒՅՆ ՏԵՂՈՒՄ** *մեկ ուրիշը.*



. . . ԼԻՊԱՐՏԻ ԴՈՒ . . . ՏԱՐՄԱՒՃԻ, ՈՐ ՈՂՈՐՄՈՒԹԲ
. . . ՆՈՐ ՄՃՈԱԿԱ ՋՈՐ . . . . ԹԱՆԱՏ ՎԱՆՔ
ՍԲ ՍՏԵՓԱՆՈՍ . . . ՍԲ ՍԱՐԳՍԻ ՏԱԻՆԻՆ . . .

Ծանոթ. *Նվիրատուները Օրբելյան տոհմից հայտնի անձնավորություններ են, XIII դարի երկրորդ կեսերի։ Գրված է նախորդ արձանագրության գրչի ձեռքով և նույն գրչությամբ։ Նախորդի նման հինգ տողանոց արձանագրության բեկոր է. այս բոլորը թելադրում են երկու բեկորները համարել մի մեծ արձանագրության մասեր։*

Լուսանկ. 92

**240. ՆՈՒՅՆ ՏԵՂՈՒՄ** *մեկ ուրիշը.*



:ՅԺԹ: ՀԱՅՐԱՊԵՏԱՑ ԵՍ ՇԱՒԹԷՍ ՏՎԻ . . . .
ԻՆ ՍԲ. ԱՍՏԵՓԱՆՈՍԻ . . . ՄԻԱԲԱՆՔ ՀԱՍՏԱՏԵՑԻՆ
. . . ՊԱՏԱՐԱԳ ՅԱՅՏՆՈՒԹՆ ՏԱԻՆԻՆ . . . .
ԽԱՓԱՆՈՂՔՆ ՆԶՈՎԵԱԼ ԵՂԻՑԻՆ . . . . . .

Ծանոթ. *Առաջին տողը մի արձանագրության վերջին մասն է՝ գրված ավելի մեծ տառերով։ Մյուս 4 տողերն այլ արձանագրություն է, որի շարունակությունը կազմող մասերը պակասում են։*

Լուսանկ. 93

**241. ՆՈՒՅՆ ՏԵՂՈՒՄ** *մեկ ուրիշը.*



. . . . . . ՀՈՅ ԱՑ. ԱՄՈ . . . . . .
. . . . . . ՊԱԻՆ ՄԱՐԵՄՏՈՒՐ . . . .
. . . . . . ՄՃԱՌԱԿԱՋՈՐ . . . . .
. . . . ՍՏԵՓԱՈՍ Ի ՏԱԻՆԻ . . . .
. . . . . . Յ ԱՅՏՆՈՒԹԵԱՆ . . . . .

Լուսանկ. 94

**242. ՆՈՒՅՆ ՏԵՂՈՒՄ** *մեկ ուրիշը.*



. . . . . . . ՅԻՄՈՑ ԿԱՄ ԱԻՏԱՐԱՑ . . . . . .
. . . :ՅԺԴ: ՀԱՅՐԱՊԵՏԱՑ ՆԶՈՎԱԾ ԵՂԻՑԻ

Լուսանկ. 95

243. Ս. ՍՏԵՓԱՆՈՍԻ *հարավային պատի տակ, արտաքուստ, թափված՝ երեսպատման արձանագրված քարի վրա.*



ԿԱՄԱՒՆ Ա̅Ծ̅. ԵՍ . . . . . . . .
ՄԻՆ ՏՎԻ ՇՂՈՒՏԻՆ . . . . . .
ՈՒ ՇԱՀՄԱՐԴԻՆՑ Հ[ՈՂ . . . . .
ԱՆԱՑ ԱԲԳԱՆ ԹՈՂԻ ՉՀ . . . .
ՍԻԱՐԱՆՔ [Ա]ՄՀՍԱՆԷՑԻՆ :Դ: ՊԱՏԱՐԱԳ
ՊԱՐ . . . ԲԱՆՆ ԿԱՏԱՐԻՉՆ ԱԻՐՀՆԻՆ Ի
Տ̅Է̅. ԽԱՓ[ԱՆՈՂՔՆ ԴԱՏԻՆ].

Լուսանկ. 96

244. Ս. ՍՏԵՓԱՆՈՍԻ *հարավային պատի տակ, արտաքուստ, գետնի մեջ խրված երեսպատման քարի վրա. 1 տող.*



. . . . . ԿԱ[ՏԱՐԻՉՔ Գ[ՐՈՑՍ . . . .

ՎԱՆՔԻ ԲԱԿՈՒՄ, ԳԵՐԵԶՄԱՆԱՏԱՆԸ ԵՎ ՇՐՋԱՊԱՏՈՒՄ ՑՐՎԱԾ ԽԱՉՔԱՐԵՐ ԵՎ ՏԱՊԱՆԱՔԱՐԵՐ



245. ԲԱԿՈՒՄ, *ս. Ստեփանոսից հարավ-արևելք՝ հիմնապատերը միացած մեծ շենքի մեջ, տեղից խախտված և փչացված մի տափակ գերեզմանաքարի վրա.*

Թ[ՎԻ]Ս :ՇՂԵ: (1246) ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ
[ԴԱՆԻ]ԵԼԻՍ. ՅԱՂԱԻ[ԹՍ ՅԻՇԵՑԷՔ

Լուսանկ. 97

246. ԳԵՐԵԶՄԱՆԱՏԱՆ *հարավային եզրին կանգնած փոքր խաչքարի՝ խորանարդաձև և լավ մշակված պատվանդանի վրա.*



Ի Թ[Վ]ԻՆ :ՈԿԴ: (1215) Ի ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆՆ Ի ՎՐԱՑ ԼԱՇԱԻՆ ԵՒ
ՅԻՇԽԱՆՈՒԹԵ. ՄԵԾԻՆ ԻՒԱՆԷԻ ԵՒ ՅԱՇԽԱՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՆՆ ԱԻԱԳԻՆ
ԵՍ ՀԱՅԱՍԿՈՍԳԱԻ ԿԱՆԿՆԵՑԻ ԶԽԱՉՍ Ի ԲԱՐԷԽԱԻՍՈՒԹԵ ՀՈԳՒ ԻՄՈ
ՇՀԵԱԳԱՋՍՐՈՑ ՈՐՔ ԵՐԿՐՊԱԳԷՔ ՅԻՇԵ[Ց]ԷՔ:

Ծանոթ. Արձանագրության տողերն սկսվում են պատվանդանի հյուսիսային երեսից և շարունակվում արևմտյան երեսի վրա: Առաջին երեսին 3 տող է, երկրորդին՝ 4: Թե՛ մեկ և թե՛ մյուս երեսների վերջին տողերը ծածկված են հողի տակ և խոնավությունից քայքայվել են, այդ պատճառով էլ որոշ տեղեր չեն վերծանվում. ուղղումները ընդգծել ենք:
Խաչքարի վրա կան հետագայում խազելով գրված անորոշ տառեր և թիվ ։ՁԴ։



**247. ԳԵՐԵԶՄԱՆԱՏԱՆ** *մեջ պատվանդանից ընկած խաչքարի վրա.*

ԹՈՒԻ˻Ն˼ ։ՈԿԷ։ (1218) ԿԱՆԳՆԵՑԱՒ ԽԱՉ|Ս Ի
ԲԱՐԵԽԱՒՍ|ՈՒԹԻ ԽՍԶԱՏՐՈՅ ˻Ա˼ՆՑԱ˻Ղ˼Թ|
ՓԻ˻Լ˼ԻՍՈՓԱՅԻ. Տ|ՅՐԱԺԱՄ ՓՈԽԵՑԱՒ|.
ՅԻՇԵՑԷ֊Ք Ի ՔՍ.

*Հրատ. Հովսեփյան, Գ, 75,*
Լուսանկ. 98

**248. ԳԵՐԵԶՄԱՆԱՏԱՆ** *բլրի լանջին, վերևից գլորված և մեջտեղից կոտրված խաչքարի տակին. 2 տող.*



Թ˻Վ˼ ։ՁԻԸ։ (1279) ԿԱՆԳՆԵՑԱՒ ԽԱՉՍ Ի
ԲԱՐԷ|Խ˻ԱՒ˼ՍՈՒԹԻ ԱՄԻՐ ՍԻԱԳԻՆ ԵՒ
ԾՆՈՂԱՑ ԻՒՐ˻ՈՑ˼։

Լուսանկ. 99

**249. Ս. ՍՏԵՓԱՆՈՍԻ** *արևմտյան պատի տակ. խաչքարի բեկորի վրա.*



ԿԱՄԱՒՆ ԱՅ. ԵՍ ՍԱՐԳ|ԱՒԱԳՍ Կ˻Ա˼ՆԳՆԵՑԻ
ՉԽԱՉՍ Ի ԲԱՐԵԽԱՒՍՈՒԹԻ. Ծ˻Ն˼ՈՂԱՑ ԻՄՈՑ|.
ԹՎ. ։ՉԽԵ։ (1296):

**250. Ս. ՍՏԵՓԱՆՈՍԻ** *հարավային կողմում կանգնած, կիսովին թաղված. մի խաչքարի ճակատին և շրջանակներին.*



ԿԱՄԱՒՆ ԱՅ. ԵՍ ԱՄԻՐՇԱՀ ԿԱՆԳՆԵՑԻ ԶԽԱՉՍ Ի ԲԱՐԵԽԱՒՍՈՒԹԻ ԳՐԻԳՈՐՈՅ, ԵՂԲԱՒՐ ԻՄՈՅ, ՈՐ ԿԻՍԱՒՐԵԱՅ ՓՈԽԵՑԱՒ Ի ՔՍ։

Ծանոթ. *Սկզբի մասը լրացնում ենք, ենթադրելով, որ Ամիրշահը նույնն է եկեղեցու ավանդատան շինության ծախսը հոգացած նույնանուն նվիրատուի հետ (արձ. 205)։*
*Արձանագրության վերջում կարող էր և թվական լինել, բայց թաղված մասերը բացելու հնարավորության չունեցանք։*

Լուսանկ. 100

**251. Ս. ՍՏԵՓԱՆՈՍԻ** *արևելյան պատի տակ, տափակ տապանաքարի երեսին, 5 տող.*



ՅՈՅՍ· ԹՎ. ։ՉԿԹ։ (1320) ԱՅՍ Է ԽԱՉԳԻՍՏ ՅԱԿՈԲ ՔԱՀԱՆԱՅԻՆ.

Ծանոթ. *ԽԱՉԳԻՍՏ տառաշարքը թերևս հնարավոր է* խաչ հանգիստ *կամ* խաչ հանգրստեան *վերծանել։*

**252. Ս. ՍՏԵՓԱՆՈՍԻ** *արևելյան կողմում, հոգևորականի տապանաքարի երեսին, 2 տող.*



ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ ՍԱՐԳԻՍ ՔԱՀԱՆԱՅԻ, ՈՐ ՏԱՐԱԺԱՄ Ի ՔՍ. ՓՈԽԵՑԱՒ ԱՂԱՉԵՄ ՅԱՂԱՒԹՍ ՅԻՇԵՑԷՔ. ԹՎ. ։ՊԵ։ (1356)։

*Հրատ. Հովսեփյան, Գ, 84։*

**253. Ս. ՍՏԵՓԱՆՈՍԻ** *հարավային պատին, արտաքուստ, հենած մի խաչքարի ճակատին, 2 տող.*



ԱԾ. ՈՂՈՐՄԻ ՄԽԻԹԱՐԱ ԵՒ ՎԱՆԵՆԻ։

Լուսանկ. 101

254. *ԳԵՐԵԶՄԱՆԱՏԱՆ կենտրոնում, տափակ գերեզմանաքարի երեսին 7 տող.*



ԹՎ. Հ[ԱՅՈՑ] ՌԵ։ (1556) ԱՅՍ Է Հ[ԱՆԳԻՍՏ] ՊԵՏՐՈՍ.

[ՅԱՂԱԻԹՍ] ՅԻՇ[ԵՑԷՔ]։

255. *ԳԵՐԵԶՄԱՆԱՏԱՆ կենտրոնում, նախորդի մոտ, նույն ձևի տապանաքարի երեսին, 6 տող.*



ԱՅՍ Է[Ր] ՀԱՆԳ[ԻՍՏ ԻՒԱՆ[ՈՅ. Ի ԱՂ[ԱԻԹՍ] ՅԻՇ[ԵՑԷՔ]։

Լուսանկ. 102

256. *ԳԵՐԵԶՄԱՆԱՏԱՆ մեջ, Խաչատուր փիլիսոփայի խաչքարի մոտ կանգնած մի խաչքարի հարավային կողին, 8 տող.*



ԹԱԹ[ԷՈՍ] ՅԻՇ[ԵՑԷ]Ք. ՔԱ[ՀԱՆ]ԱՅ Ա̅Ց̅։

257. *Ս. ՍՏԵՓԱՆՈՍԻ հարավ-արևելյան անկյունի մոտ՝ կիսովին գետնի մեջ թաղված խաչքարի ճակատին, 3 տող.*



Ք̅Ս̅. ՈՂՈՐՄԻ ՄԱՀԵՒԱՆԱ ՔԱՀԱՆԱՅԻ։

Հրատ. Հովսեփյան, Գ, 176։
Լուսանկ. 103

**258. Ս. ՍՏԵՓԱՆՈՍԻ** *բակի հարավային մասում, անդաման սրված խաչքարի փոքր պատվանդանի վրա, 4 տող.*

ԿԱՆԳՆԵՑ
ԱՒԲԱՐԵԽԱՒՍ
ԵՒԱԴԱՅԻՈՐ
ՅՔՅԻՇԵՑԷՔ

ԿԱՆԳՆԵ|ՑԱՒ ԲԱՐԵԽԱՒՍ| ⌊Ս⌋ԵՒԱԴԱՅԻ, Ո[Ր]Ք
ԿԱՐԴԱ|ՅՔ ՅԻՇԵՑԷՔ:

Լուսանկ 104

ԹԱՆԱՏԻ ՎԱՆՔԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՈՐՈՆՔ ԱՅԺՄ ՏԵՂՈՒՄ ՉԿԱՆ, ԿԱՄ ՎՐԻՊԵԼ ԵՆ ՄԵՐ ՏԵՍՈՂՈՒԹՅՈՒՆԻՑ

**259. ՎԱՆՔԻ ԳԵՐԵԶՄԱՆԱՏԱՆԸ**

թվ. ՈՂ. (1241) Ա.Ծ. ողորմէ Գորգայ և Գրիգորոյ.

*Հրատ. Հովսեփյան, Խաղբակյանք, Գ, 76։*

**260. ՆՈՒՅՆ ՏԵՂՈՒՄ, ԽԱՉՔԱՐԻ ՎՐԱ.**

Ի թվ. ՉԱ: (1252) Մեք Սարգիս և Սիմեոն
կանգնեցաք զխաչս ի բարեխաւսութիւն . . .

*Հրատ. Հովսեփյան, Գ, 76։*

**261. ՆՈՒՅՆ ՏԵՂՈՒՄ,** *նախորդներից ոչ հեռու մի խաչքարի վրա.*

Կանգնեցաւ որ խաչս բարեխաւսութիւն էավէյին(?)

*Հրատ. Այիշան, 124։*

**262. ՆՈՒՅՆ ՏԵՂՈՒՄ, ԽԱՉՔԱՐԻ ՎՐԱ.**

Ես Ամիր(?) Սարգիս կանգնեցի զխաչս բարէխաւս
հաւր և մաւր, որդոյ իմոյ, ով կարդայք յաղաւթս
յիշեցէք . . . թվ. ՋԴ: (1455):

*Հրատ. Հովսեփյան, Գ, 85։*

**263. ԳԵՐԵԶՄԱՆԱՔԱՐԻ ՎՐԱ,** *որը գտնվելիս է եղել վանքից արևմուտք, բլրակի վրա.*

Ներսէս քահանայ, որ տարաժամ փոխեցաւ առ Քս.

Ա.Ծ. ողորմի. թվ. ՉԽԴ: (1295):

*Հրատ. Քաջբերունի, Արարատ, 1889, Բ, 100։*
*Ալիշան, 124։ Հովսեփյան, Խաղբակյանք, Բ, 174։*

**264. ՆՈՒՅՆ ՏԵՂՈՒՄ, ԳԵՐԵԶՄԱՆԱՔԱՐԻ ՎՐԱ.**

Դաւիթ քահանայ յիշեցէք յաղաւթս:

*Հրատ. Քաջբերունի, Արարատ, 1889, Բ, 100։*
*Ալիշան, 124։ Հովսեփյան, Խաղբակյանք, Բ, 174։*

**265. ՏԱՊԱՆԱՔԱՐԻ ՎՐԱ.**

թվ. ՉԽԶ: (1297)

*Հրատ. Քաջբերունի, Արարատ, 1889, Բ, 100։*

**266. *ԽԱՉՔԱՐԻ ՎՐԱ,* *որը գանվելիս է եղել գերեզմանատանը։***

Ի թվին ։ՁՃԻԵ։ (1276). Ես տէր կանգնեցի զխաչս
ի փրկութի ամուսնոյ իմոյ և որդոյ իմոյ։

*Հրատ. Հովսեփյան, Խաղբակյանք, Գ, 81։*

## 17. ՎԵՐՆԱՇԵՆ (ԲԱՇՔԵՆԴ)

*Գյուղի վերոհիշյալ երկու անուններն էլ նոր են. ըստ արձանագրությունների և հիշատակարանների՝ նախկինում այս գյուղը կոչվել է Սրկղունք, Ստ. Օրբելյանի մոտ հիշատակված է Սարկողովք ձևով*[1]*։ Պատմագիրը նրա հարկի չափը նշանակում է 20, ամենամեծը Վայոց ձոր գավառի բոլոր գյուղերի համեմատությամբ։ Այս հանգամանքն ինքնին ապացույց է գյուղի մեծ լինելուն։*

*Այս գյուղի նշանակությունն առավել չափով բարձրացավ XIII դարում, երբ դարձավ Պռոշյան իշխանների նստոցը։ Վայոց ձորի հենց այս հատվածում XIII—XIV դարերում Պռոշյան տոհմի հովանավորությամբ հիմնվեցին և ծաղկեցին մի քանի կուլտուր-կրթական հաստատություններ՝ ինչպես Գլաձորի նշանավոր դպրոցը, Թանահատի և Սպիտակավոր Աստվածածին վանքերը։*

*Աղբյուրների և ուսումնասիրությունների մեջ հիշատակված են տեղեկություններ գյուղամիջում գտնվող երկու եկեղեցիների և Պռոշյանների պալատի մնացորդների, հատկապես վերջինիս ճակատաքարի մասին, որի վրա եղել է Պռոշյանների զինանշանը համարվող առյուծների քանդակը*[2]*։ Սակայն այդ բոլորից այժմ ոչինչ չի մնացել։ Անցյալ դարի 30-ական թվականներին պարսկահայ գաղթականները ս. Հակոբ եկեղեցու տեղում շինել են նորը, պատերի մեջ օգտագործելով հին քարերը, որոնցից երկուսն ունեն XIII դարի արվեստի և արձանագրության մնացորդներ։*

*Հնում գոյություն ունեցող մանր գյուղերի վերացման հետևանքով՝ այժմ Վերնաշենի սահմանների մեջ են մտնում Պռոշյանների՝ այս շրջանի նշանավոր բերդը՝ Բոլորաբերդը, որը նաև Պռոշաբերդ է կոչվում, ինչպես և Թանատի ու Սպիտակավոր Աստվածածին վանքերը։*

**267. *Ս. ՀԱԿՈԲ* *եկեղեցու արևմտյան պատի հարավային մասում, արտաքուստ, ագուցված միակտոր քարից խաչաձև պատուհանի վրա.***



ԹՎ. ։ՉԻԶ։ (1277) ՍԲ. ՀԱԿՈԲ. ԽԱՉԻՍ
Է ՊԱՀԱՐԱՆ. ՄԽԻԹԱՐ
ՎԱՐԴԱՊԵՏ։

Ծանոթ. *Կարելի է վերծանել նաև՝ ՍԲ. ՀԱԿՈԲԻՍ Է ՊԱՀԱՐԱՆ ԽԱՉԻ։*

*Հրատ. Քաջբերունի, Արարատ, 1889, Ա, 50։*
*Ալիշան, 129։*
Լուսանկ. 105

---

[1] Ստ. Օրբելեան, *Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 312։*

[2] Քաջբերունի, *Արարատ, 1889, Ա, 50։ Հովսեփյան, Խաղբակյանք, Ա, 37։*